

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /գբաղմունքի/ անվանումը	0811.05.4 «Բուսաբուծություն» մասնագիտության 0811.05.01.4 «Բանջարաբուծ» որակավորման
I. Դերը	Բանջարաբուծական տնտեսություններում բանջարաբուծը մասնակցում է տարածքի նպատակահարմար օգտագործման սխեմաների մշակմանը, ցանքաշրջանառության գրաֆիկի կազմմանը: Ապահովում է հողի միջավայրի և պայմանների համապատասխանությունը մշակվող մշակաբույսի պահանջներին, ընտրում սերմերը և տնկանյութը, դրանք նախապատրաստում ցանքի համար: Կազմակերպում է հողի նախացանքային և հետցանքային աշխատանքները, մշակաբույսերի ցանքը, բույսերի ձևավորումը, պարարտացման, սնուցման և ոռոգման աշխատանքները: Իրականացնում է հողի և բույսերի պաշտպանության միջոցառումներ: Իրականացնում է հողերի բարելավման միջոցառումներ, տալիս հանձնարարականներ և հսկում դրանց կատարումը:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Նախապատրաստական աշխատանքների կազմակերպում	
Աշխատանքային գործընթացը	Ըստ մշակաբույսերի առանձնահատկությունների՝ գնահատել հողի վիճակը, բացահայտել անհրաժեշտ աշխատանքների ուղղությունները և տեսակները, կատարել հողի նախացանքային մշակում, գնահատել սերմերի և սածիլների որակը, տեսակավորել դրանք, կատարել նախացանքային ախտահանման աշխատանքներ, սածիլները նախապատրաստել տնկման համար, կատարել հողի նախացանքային պարարտացում, ստուգել ոռոգման համակարգի և սարքավորումների վիճակը:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. հողային միջավայրի և պայմանների վերաբերյալ տեղեկությունները ամբողջական և ճիշտ են, 2. ըստ մշակաբույսերի տեսակների՝ հողային միջավայրի և պայմանների պահանջները որոշակիացված են, 3. պահանջվող լրացուցիչ բարելավումների տեսակները, աշխատանքների ծավալները որոշակիացված և հիմնավոր են, 4. փխրեցված հողի ցուցանիշները համապատասխանում են ագրոտեխնիկական չափանիշներին,

	<ol style="list-style-type: none"> 5. սերմերի և սածիլների վիճակի գնահատման ցուցանիշները հիմնավոր են, 6. սերմերը և սածիլները տեսակավորված են հետագա օգտագործման համար՝ նպատակահարմար ձևով, 7. հողի և սերմերի ախտահանման գործողություններն ամբողջությամբ կատարված են, 8. ախտահանման համար կիրառված նյութերը ճիշտ են ընտրված, 9. տնկման համար սածիլների նախապատրաստման գործողությունները ամբողջությամբ կատարված են, 10. հողի նախացանքային պարարտացման և սնուցման աշխատանքներն ամբողջությամբ կատարված են, 11. սարքավորումների և գործիքների կիրառումը ճիշտ է, 12. ոռոգման համակարգի վիճակը ստուգված է, 13. նախապատրաստական աշխատանքների արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը լրացված են:
--	---

Խնդիրների քննազավառ 2. Ցանքի և սածիլման աշխատանքների կազմակերպում

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Սահմանել մշակաբույսերի ցանքի հիմնավորված հաջորդականության սխեմա, հաշվարկել սերմերի և տնկանյութի պահանջվող քանակությունները, ընտրել ցանքի և սածիլման աշխատանքների նպատակահարմար ձևեր ու եղանակներ, հրահանգավորել աշխատողներին, ընտրել անհրաժեշտ մեքենաներ, սարքավորումներ, գործիքներ, կատարել ցանք և սածիլում, կատարել հետցանքային խնամքի առաջին աշխատանքներ:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1. տվյալ ժամանակի համար ընտրված մշակաբույսերի կազմը և տեսականին հիմնավոր է, 2. սերմերի և տնկանյութի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալներն ամբողջական են, 3. ըստ առաջադրանքի՝ սերմերի և տնկանյութի անհրաժեշտ քանակները հաշվարկված են, 4. ցանքի և սածիլման ընտրված ձևերը և եղանակները հիմնավոր են, 5. աշխատողների հրահանգավորման առանցքային հարցերը բացահայտված են,

	<ol style="list-style-type: none"> 6. աշխատողները տեղեկացված են աշխատանքների կատարման հիմնական հարցերում, 7. ցանքի և սածիլման համար օգտագործվող միջոցներն ու պարագաները առկա են, 8. ցանքի գործողությունը ճիշտ է կատարված, 9. սածիլների տնկման գործողությունը ճիշտ է կատարված, 10. հետցանքային խնամքի առաջին աշխատանքները կատարված են ամբողջությամբ:
--	--

Խնդիրների բնագավառ 3. Մշակաբույսերի խնամքի աշխատանքների կազմակերպում

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Ըստ մշակաբույսերի խմբերի և տեսակների՝ կազմել խնամքի աշխատանքների ժամանակացույց, կատարել մշակաբույսերի սնուցման և պարարտացման աշխատանքներ, կատարել մշակաբույսերի ոռոգում, պայքարել վնասատուների և հիվանդությունների դեմ, կատարել բուկլիցի, փխրեցման, նոսրացման աշխատանքներ:</p>
---------------------------------------	---

<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1. խնամքի աշխատանքների ժամանակացույցը հիմնավոր և ամբողջական է, 2. ըստ աշխատանքների տեսակների՝ պահանջվող գործողություններն ամբողջական են, 3. սնուցման և պարարտացման չափաքանակները հաշվարկված են, 4. սնուցման և պարարտացման ծրագրավորվող ժամկետները և հաջորդականությունը որոշակիացված է, 5. սնուցման և պարարտացման աշխատանքների կատարման վերաբերյալ աշխատողների հրահանգավորումը կատարված է, 6. պարարտացման և սնուցման գործողությունները տեխնոլոգիապես ճիշտ է կատարված, 7. մշակաբույսերի ոռոգման ժամանակացույցը կազմված է, 8. ոռոգման չափաքանակները և ռեժիմները պահպանվում են, 9. ըստ մշակաբույսերի՝ վնասատուների և հիվանդությունների հնարավոր կազմը ամբողջական է, 10. վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքների ժամանակացույցը կազմված է, 11. անհրաժեշտ բուժամիջոցների քանակությունները հաշվարկված են,
-----------------------------------	--

	<p>12. աշխատողների հրահանգավորումը ճիշտ է կատարված,</p> <p>13. խնամքի աշխատանքների ժամանակացույցը կազմված է,</p> <p>14. խնամքի աշխատանքները ժամանակին և ամբողջությամբ կատարված են:</p>
Խնդիրների բնագավառ 4. Բերքահավաքի կազմակերպում	
Աշխատանքային գործընթացը	Գնահատել բերքի հասունության վիճակը և առաջին բերքահավաքի հնարավոր ժամանակը, նախապատրաստել բերքահավաքի համար անհրաժեշտ սարքավորումները, մեխանիզմները, գործիքները, հավաքել և տեսակավորել բերքը:
Կատարման չափանիշներ	<p>1. բերքի հասունության աստիճանը ճիշտ է գնահատված,</p> <p>2. բերքահավաքը սկսելու ժամկետը հնարավորինս ճիշտ է որոշված,</p> <p>3. բերքահավաքի համար անհրաժեշտ բոլոր պարագաներն առկա են,</p> <p>4. բերքահավաքի համար աշխատողներն հրահանգավորված են,</p> <p>5. բերքը անկորուստ հավաքված և տեսակավորված է,</p> <p>6. բերքը ճիշտ է տարայավորված,</p> <p>7. անհրաժեշտ փաստաթղթերը լրացված են:</p>
Խնդիրների բնագավառ 5. Հետբերքահավաքային աշխատանքների կազմակերպում	
Աշխատանքային գործընթացը	Ըստ իրավիճակի՝ կազմել հետբերքահավաքային աշխատանքների ցանկը և ժամանակացույցը: Կատարել հետբերքահավաքային աշխատանքներ:
Կատարման չափանիշներ	<p>1. հետբերքահավաքային անհրաժեշտ աշխատանքների ցանկը ամբողջական է,</p> <p>2. աշխատանքների ժամանակացույցը կազմված է,</p> <p>3. ըստ մշակաբույսերի՝ պահպանման և պահեստավորման ռեժիմները ճիշտ է կատարված,</p> <p>4. ճիշտ են կազմակերպված արտադրանքի մթերման և սպառման աշխատանքները,</p> <p>5. աշխատանքները ամբողջական և ճիշտ կատարված են,</p> <p>6. հողը պատրաստ է հաջորդ ցանքի համար:</p>
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության	Բանջարաբույծը պատասխանատու է բանջարանոցային տնտեսության տվյալ աշխատանքային տեղամասում ագրոտեխնիկական միջոցառումների ժամանակին և ամբողջությամբ կատարման, տարածքի արդյունավետ օգտագործման,

<p>շրջանակ/</p>	<p>մշակաբույսերի բերքատվության բարձրացմանն ուղղված միջոցառումների կատարման, բերքի որակի ապահովման, կիրառվող տեխնիկական միջոցների ճիշտ օգտագործման, անվտանգության կանոնների պահպանության համար:</p>
<p>IV. Լեզուները</p>	<ul style="list-style-type: none"> • հայերեն՝ գերազանց, • օտար լեզու՝ բավարար ՝ հաղորդակցվելու և մասնագիտական գրականությունից և սարքավորումներից օգտվելու համար:
<p>V. Համակարգիչը</p>	<ul style="list-style-type: none"> • MS Office՝ բավարար, • Internet՝ բավարար,
<p>VI. Գիտելիքները</p>	<p>Բանջարաբույծը պետք է տիրապետի բանջարանոցային մշակաբույսերի մշակության աշխատանքների կազմակերպման և սպասարկման մեթոդներին, հողի մշակման համակարգերին, հողի հիմնական և նախացանքային մշակմանը, ընտրյալ մշակաբույսերի մշակության տեխնոլոգիական գործընթացներին, մշակաբույսերի ցանքի նորմաներին, պարարտանյութերի տեսակներին, կաթիլային և անձրևացման եղանակներով ոռոգման, բույսերի պաշտպանության, մոլախոտերի դեմ պայքարի ագրոտեխնիկական և քիմիական միջոցառումներին, բերքի պահեստավորման և իրացման աշխատանքներին, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների ու դրանց հիմնական հանգույցների, աշխատանքային սկզբունքի, սպասարկման և շահագործման պահանջներին, ինչպես նաև անվտանգության և հակահրդեհային կանոնների իմացությանը, աշխատանքի բնագավառին առնչվող ընդհանուր հասկացություններին, սկզբունքների և մեթոդների իմացությանը, որոնք պահանջվում են հետագա մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:</p>
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Աշխատանքի կազմակերպման, սպասարկման և բանջարանոցային մշակաբույսերի մշակության համար հողատարածքների ընտրության ու ցանքի նորմերի որոշման հմտություններ, պարարտանյութերի տեսակների ընտրության և դրանցով հողը պարարտացնելու աշխատանքների կազմակերպման կարողություններ, բույսերի հիվանդությունները ճանաչելու և բուժման աշխատանքներ կատարելու կարողություններ, ոռոգման աշխատանքների, բերքահավաքի, բերքի պահեստավորման աշխատանքների կատարման հմտություններ, բանջարանոցային մթերքների արտադրության տեխնոլոգիաների կիրառության կարողություններ, գյուղատնտեսական մեքենաների և</p>

	<p>սարքավորումների ընտրության, շահագործման և սպասարկման աշխատանքների կատարման կարողություններ, աշխատանքներում անվտանգության և հակահրդեհային կանոնների պահպանման հմտություններ:</p> <p>Կարևորել ազգային և համամարդկային մշակութային արժեքները:</p> <p>Ինքնուրույն կազմակերպել և կառավարել սեփական աշխատանքային կամ ուսումնառության գործընթացները՝ կանխատեսելի, բայց փոփոխունակ միջավայրում և ստանձնել դրանց գնահատման ու բարելավման որոշ պատասխանատվություն:</p> <p>Բացահայտել սեփական կրթական պահանջմունքները՝ ուսումնառությունը շարունակելու համար: Կազմակերպել այլ անձանց առօրյա գործողությունները:</p> <p>Կատարել բնության, հասարակության և առօրյա կյանքի տարաբնույթ երևույթների վերլուծություններ՝ կիրառելով հիմնավորման և ապացուցման մեթոդներ:</p> <p>Պահպանել հասարակական համակեցության կանոնները և դրսևորել քաղաքացիական գիտակցությամբ վարքագիծ:</p> <p>Արժևորել և գնահատել ազգային և համամարդկային արժեքները:</p>
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Հաղորդակցվող, թիմային աշխատանքի պատրաստ, նորին ձգտող, ստեղծագործական մտածելակերպ ունեցող, ընկերասեր, հումորի զգացում ունեցող, համբերատար, պարտաճանաչ, ազնիվ:</p>